

ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտարան	համար
Տարեկան	12 Ժր.
Վեցամսեայ	6 "
Արտատպութեան	
համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Անկախ	համար
Տարեկան	3 ցր.
Վեցամսեայ	1.50 "

Մանուկան տղա տալիս երեսին համար 40 սխալ վերջին երեսին համար 20 սխալով է. երեսին աւելի անգամներու պատու 20 0/0 գեղջ կըլլայ:

Վառճախի համար մեղք 40 սխալով

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԿՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ. ՏՄԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

Հանդիս էր որով որիկն հարգարարական հասցեիկն.

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Aurichien" R. P. Kalemcarian, Mechitaristengasse W. 4. Vienne

Արտատպութեան համար մեղք (20 ՍԱՆԹԻՄ) Պաշտարանի համար մեղք (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չեն տրուիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՆԱԿԻ ԳՐՈՒՄԸ ԲԱՏԱՆԿՐԸ ՊԵՏՐ ՎԱՆՆԻԿ ՎԱՐՍԻ

ՀԱՅ ՄՇԱԿԻՆ

Այդ ո՛ւմ համար դու կը հերկես եւ կը թափես արիւն-քրտինք. Յետոյ աչքդ անկամ կանչես Բնագործիկան Ստուգած, երկինք:

Դու լաճերուդ հաց զլանաս կնիքդ ծախես զենս ցորեն. Յետոյ զարձակ կը մուրաս հաց. Լաճերդ նոթի որ չմեռնեն:

Երբ կաշխատես դու չարաչար թուրքն ու քուրդը հոն ի՞նչ կ'ընեն Անվտանգ-անհոգ ճեմին ձոր-սար Բայց միշտ կուշտեն միշտ քե՛ք կընեն:

Հայ չեն մուրսը բնաւ երբեք Ու չեն կանչեր Աստուած երկին. Ունին սուր-թուր, հրացան ու աչք եւ չեն վախկոտ ամենեւին:

Մշակ մածիկ երկաթ կտորէ կոէ-կոփէ շինէ հրացան Մտխէ կով, արտ, վառոգ զնէ կուենաս հաց, ազատ վաթան:

ԱՆՈՒՇԱՒԱՆ

ՈՐՈՇ ՊԵՏՔ Ե ԼԻՆԵԼ

Մեր մէջ մի տեսակ սովորութիւն է գարձել ու կից հասարակական հաստատութիւն կամ հիմնարկութիւն քննադատած միջոցին միշտ մտթ կ'անորոշ դարձած քննելով խօսել, զանազան հաշիւներ ինկատի ունենալով: Քննադատութիւնները լինում են եղածի պակասները շտկելու, լաւը վատից պատելու համար, որպէս զի մեր խօսքով առաջնորդ վոլները օգտվեն դրանից եւ ուղիղ ճամբով զնան: Բայց երբ քննադատը ինքը քաջութիւնը եւ պատրաստութիւնը չունի իր միտքը ողորդապէս յայտնելու իրեն ունկնդրող ամբողջի կամ թէ իր գրածները կարգացողին, այն մամանակ նա փոխանակ ուրիշներին ճամբա ցոյց տրուող ներկայանալու, ստանձնում է ճամբա կորցնել տուողի դերը:

ՎԱՐՂԱՆԱՆՑ ՏՕՆԸ

Հինգ շաբթի օր ըստ սովորականին Վառնայի եկեղեցիին մէջ կատարուեցաւ Վարդանանց տօնը. կը մասնակցէր և Երգեցիկ խումբը, օրտան պատշաճ երգեր կրգելով: Դպրոցին աշակերտներն ալ փոխն ի փոխ ոտանաւորներ արտասանեցին:

Ոտանաւորներու արտասանութիւններէն վերջը ուսուցիչ պ. Հայկ Փէշտմալճեան սկսաւ յեղափոխութեան մասին ճառել:

Դրուտեց յեղափոխութիւնը կծու ակնարկներ ըրաւ հնչակեաններու և միութենականներու մասին, յանդիմանեց չեզքքները, պարտաւեց աշտոտ հակա-յեղափոխական մամուլը և վերջապէս իր ճառը պսակեց բոլոր հայ յեղափոխական մարմիններու վարիչներու հասցէին ուղղուած վտրկաբեկող խօսքերու տարափով մը:

Այնպէս որ ուկնդիրներու մէկ մասը բոլորովին անորոշ վիճակի մը մատնուեցաւ, իսկ ամբողջ այն համոզման հասաւ որ մեր ամէն յեղափոխական վարիչները անպէտք, անազնիւ, շարլաթան և աղտոտ մարդիկներ են:

Թերթիս խմբագիրը՝ Վարդօ, չը նայած որ ճառախօսին ամբողջ համակրութիւնը Դաշնակցութեան կողմնէր, պարտք համարեց հայ յեղափոխականը պաշտպանել ստակալի յարձակումի մը գէ՛մ, որ կը կատարուէր հայ յեղափոխութիւնը բարձրացուելու անունով, այնպիսի անհատի մը կողմէ որ յեղափոխական զոհողութեան տեսակէտէ չէր կրնար հաւասարիլ ոչ զոհող միութենականի մը, ոչ զոհող հնչակեանի մը, որ ճիւղէն ալ որ բոլոր, ոչ զոհող արմէնականի մը, և ոչ ալ զոհող դաշնակցականի մը:

Վարդօ երեք ուսուցիչներուն իր խօսելու տրամադրութիւնը յայտնելէ յետոյ լեմ' ելաւ, ու մատնանշելով պարօն Փէշտմալճեանը և իր ըսածները սկսաւ խօսել: Քանի մը երկտասարկութիւններ արտասարդներ, որոնք թէ Վարդօի և թէ Դաշնակցութեան հակառակ են, կը պոռան որ Փէշտմալճեան լուէ և Վարդօն կը խնդրեն որ շարունակէ իր խօսքը: Այդ փոքրիկ միջադէպին վրայ, քանի մը կրկնէր ազնուկ կը բարձրացնեն վախերնուն, Աստուած ազատէ, ու Վարդօ իր ըսելիքին կարեւոր մասը արգէն յայտնած ըլլալով, այլևս աւելորդ կը համարէ շարունակելը ու բեմէն կը հեռանայ:

Երբ և իր ըսածները սկսաւ խօսել: Քանի մը նախադասութիւններ արտասանելէ յետոյ, պարօն Փէշտմալճեան ինքզինքը կորսնցնելով միջամտեց յայտարարելով որ Վարդօ զինքը սխալ հասկցած է և որ իբր թէ իրաւունք չունի եղեր խօսելու:

Այդ միջամտութեան վրայ, ժողովրդի մէջէն, քանի մը երկտասարդներ, որոնք թէ Վարդօի և թէ Դաշնակցութեան հակառակ են, կը պոռան որ Փէշտմալճեան լուէ և Վարդօն կը խնդրեն որ շարունակէ իր խօսքը: Այդ փոքրիկ միջադէպին վրայ, քանի մը կրկնէր ազնուկ կը բարձրացնեն վախերնուն, Աստուած ազատէ, ու Վարդօ իր ըսելիքին կարեւոր մասը արգէն յայտնած ըլլալով, այլևս աւելորդ կը համարէ շարունակելը ու բեմէն կը հեռանայ:

ՈՐԲԱՆՈՑ

ՆՈՒԱԶԻԻ ՏԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Քոլլօննայի խորհրդաւոր տունը ծածկող սեւ ու հաստ քողը վերջապէս պատուտելով ինկաւ վար:

Այ մենք՝ շատ մօտէն՝ ականատեսի մը պէս նուազի լը կուանի շիլ հաստատութեան բոլոր գաղտնիքներն ու մեքենայութիւնները մանրամասնօրէն գիտենք:

Ըստ մանիոյ մէջ հաշակուած Քոլլօննայի որբանոցը շահագործական տուն մ'է, որուն սկզբնական դրամազուլը դժբախտաբար կազմուած է արիւնի մէջ ծնած մեր որբերու անունով:

Պիտի շուարէինք պահ մը ու պիտի ըսէինք թէ: Քոլլօննան, իբր մոլեռանդ կին իր երիտասարդական սխալները կամ մեղքերը քաւելու համար գուցէ մտածած է հիմնել բարեգործական հաստատութիւն մը, եթէ չը տեսնէինք անոր մէջ սեւ ու չար հոգի մը: որ զուրկ է մարդկային և ասպետական քնքուշ ու վեհ

ՎԱՐՂՈ



զգացումներէ(1)
Բուսանահայ տղաքը ախտաւոր
ու գիծ կնկան մը ձեռքին մէջ
կը գտնուին այս միջոցին որ գեռ
կը յուսայ միջոց ծառայեցնել
մոլեակնդ պատաններէ զրամ և
Բուսահայերէ՛րու պլիններ կորզե-
լու :

Ճիշտ թիւակալ հաշիւներով
լարուած թակարթ մ'է նուազի
տունը և այդ անտոտ ձեռնարկին
մէջ, Քոլլոննան թեւ ու թիկունք
ունեցա՞նք մէկ երկու հայեր և
հոշակաւոր խաչազող աէր թա-
գաղարք մը : Մաքու կամ Մաքու ա-
նունէ դատարկագորտ ազգային :

Կամ ինչո՞ւ ինչո՞ւ խաչազող
կամ ինչո՞ւ ինչո՞ւ խաչազող
բայց ընդհանրապէս զորք
թիւնը չ'ընկերակցիր, մոլեռ
դ և անորչ՝ հոգիներէ կարմրուկ
ոսկիներ պիտի կորչէր Բուսանի-
այէն ճանկուն անտղաքը իբր հայ
որքնը ցուցադրելով :

Տեսնենք ի՞նչ ի՞նչ և ի՞նչ ծը-
րագրով :
Ձոյ խաչազողները այնպէս
ծրագրած էին թէ սողալով պիտի
կրնան կաթողիկոսի, Պարի,
պարսկարքներու և բարեգոր-
ծական հասարակութեանց վստա-
հա՞նքը և պաշտպանութիւնը
շահիլ և այդ միջոցով հարուստ-
ներու ոսկիները չըլլան :

Մաքուտ Փափագեւուն գործին
իբր օժանդակութիւնը պիտի
տար անդիէն անդիէն որքեր
ձեռք ձգելով : Ըրաւ ուղի :
Պատր Խաղոսն ալ, իբր ճար-
պիկ հնձուր և քաջահմուտ Ռու-
սաստանի նոյն իսկ ամենէն մութ
և ետ ինկած անկիւններուն,
գարնան զանգառաքը կրծքին
կոնդակն ու վկայականները ձեռ-
քը՝ պիտի արշաւէր Ռուսիոյ վը-
րայ ու հայ որքերու անունով
բուսաններ պիտի գրէր :

Ձեզաւ, չի յաջողեցան, գաղա-
նիքը բացուեցաւ և խաղաղու-
թիւնը կրեւան ելաւ, որովհետեւ
միմիւր յն սուտի փոռտի վրայ էին
հիմնած գործերնին, և անհրա-
ժեշտ տարրերը դրամագլուխը և
բարոյականը կը պակսէր իրենց :
Փուցէ քիչ մ'աւելի ուշ քայ-

ՄԱՆՕԹ. — (1) Քոլլոննայի զիմու-
ները արդիւնք չեն տար : հայ հա-
րուստը իր քսակը չի բանար անոր
առջեւ, գաղթականութիւնը ո՛չ մի-
այն չի համակրիր, այլ անկէ սպա-
հոյութիւն կը պահանջէ : տեսնելով
իր խախտ տան մտաւրուտ անկու-
մը, վայրացած կիներ գրաւոր սպառ-
նալիքներ կը տեղայ առգին անդին,
որ իւր առջեւ պատնէշներ չի քա-
շեն՝ եթէ ոչ, ցոյց պիտի տայ հրա-
պարակաւ հայ ժողովուրդի քայքա-
յող յատկութիւնները և ապերախ-
տութիւնը, ցոյց պիտի տայ թէ հայը
արժանի է վարդուկերու : մէկ խօսքով,
Փրանսական թերթերու մէջ հայ ազ-
գի նկատմամբ աննպաստ յորտածներ
գրելով պիտի ստեղծէ հակահայկական
չարժում մը :

քայուէին, եթէ դերակատար-
ները մրուսած ու սկսած մարդիկ
չըլլային :
Նոյն իսկ գործի սկզբնաւորու-
թեանը մեր աչքին կը զարնեն
խաչազողութիւնը և միսկին շա-
հագործումը :

Մաքուտի հաւաքած տղաքը
որքեր չեն, բոլորն ալ գրաւ շահող
ծնողքներ ունին, որոնք մէկ
խօսքով ծ լիրա ճանապարհախս
կը վճարեն :
Մաքուտ իւր ճահագործումը
բնական է իր ծրագրերը զուխ
հանելու համար միջոցներու մէջ
խտրողութիւն չը պիտի գնէր,
բայց շատ ցաւալի և արհաճորք-
լի է Ռուսահայ ծնողներու
վարձուրը, որոնք առանց ու է
խղճահարութեան, և առանց
կարմրելու, լոկ վալլուն ապա-
գայի մը յոյէն շլացած վստա-
հեր են ասոնց իրենց զաւակները՝
իբրև որքեր :

Թող մենէ իմանան, որ խաբ-
ուած են և իրենց հաշիւները
ծիշք չի պիտի ելլեն, բայց են-
թադրենք պահ մը, որ որքանո-
ցի գործը խաչազողական ձեռ-
նարկ մը չըլլար և տղաքը մէկ
մէկ փայլուն աչազայի տիրանա-
լին, Ռուսահայ աղաները
արդեօք բնաւ չի՞ պիտի մտա-
ծէին և խղճահարութիւն, որ ի-
րենց ըրածն ալ խաչազողութե-
նէն ոչ նուազ արհամարի է և
պախուսակի լի վարձուր մը և
մունտար գողութիւն մ'է, չէ՞ մի
որ ճշմարիտ որքերու հացն ու
ապագան խտմ պիտի ըլլային :

Այդ պայմանները թող իմանան,
որ իրենց զաւակները նուազի
մէջ թշուառ են : Ձորս հինգ լե-
զու չեն սորվիր Հայերէն խօսելն
ու հայերէն երգելը ընդմիջտ ար-
գիլուած է :

Հայերու հետ յարաբերութիւն
չունին : հայ եկեղեցիին չեն եր-
թար : ձեռ կուտեն : ուտելիք
չունին, ձեռ մաղապաներէ մու-
րացկանութեամբ հաւաքուած
թափոններով (2) հագուած են :
բայց ամենէն հաւաքուն ու ահա-
ւին է Քոլլոննայի տան բանտն
ու զնտանը : (3)

(2) Քոլլոննայի տան տասը տա-
րեկան աղջիկներէն մէկուն կոչիկները
մենք աչքովս տեսանք, մէկը միւ-
սէն երեք մտ երկայն էր, կը հե-
տեցնենք, որ տղոց կոչիկները դը-
րամով չեն գնուած, սլ ու է բա-
րեղաշտ կոչիկարի թափոններէ առ-
նուած նուէրներ են :

(3) Արշալոյս Մանուկեան, որ այս
միջոցին Փարիզ կը գտնուի հարցա-
քննուած է շատ անգամներ, նոյն իսկ
հոգեւոր հովիւ Հայր Վառձապուհ
Քիպարեանէ : պղտկի խօսքերը
լաւագոյն փաստերը կրնան նկատուիլ,
եթէ քիչ մը խնօք չի կենսայինք
վերջ մութ սենեակը կը գնէին և վը-
րանիս կը կղզիին, իսկ եթէ շատ
խնօք չի կենսայինք վարի մութ մա-
ղաքան :

Նուազի տան մէջ հանուած՝
տղոց մէկ լուսանկարը տեսանք,
և կը նկատենք փաստերու պեր-
ճախօսը, բոլորն երեւէն կար-
ծես վիշտ, տխրութիւն և յու-
սահատութիւն կը վազէ :
Գիշերը՝ երբ լուսնիւնը կը
տիրէ նուազի տան մէջ, պղ-
տիկները փոխանակ քնանալու և
իրենց սպառած ոյժերը գտնելու,
կը հաւաքուին ու ծնրադրելով
կազմեն, «Տէր Աստուած զրկէ
մեր ծնողները որ մեզ ապտտեն
այս տեղէն» :

Ո՞րք են անոնց անտարբեր ծը-
նողները, եթէ չեն ուզեր իրենց
զաւակներուն ախրութիւն ընել,
թող համարձակօրէն բռնեն, դեռ
հայրութեան մէջ որքերու համար
բարխոյ սղնիւ հոգիներ կը
գտնուին :

ՍԻԼԷ
14 փետրվար 1903
Քարիզ
ՔՕՆՄԹԱՆՅԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՊԱՏԻՍՏԵՐ

Մեծ պարսկահայի իւր պատգ-
մաւարներէ՛. շարեգործ, ընկերու-
թիւն և Լորդեսիտ վարչութիւն :
Վերջացող շաբթուն մէջ տեղի ու-
նեցաւ ազգային տարեկան մեծ պա-
րահանգէսը՝ ի նպատակ քաղաքիս Հայ-
կազեան վարժարանին : Թագ խոր-
հրդոյ պատմաբանը, որ կազմա-
կերպիւն էր սոյն պարահանգէսին,
ամսականներու վաճառման համար,
տիկնանց մասնախումբ մը ընտրեց,
զոր սիրայօժար կերպով յանձն առին
քաղաքիս հայ իգական սեռի նշանա-
ւոր ներկայացուցիչներէն՝ ազն. Տիկ-
նայք Իսկուհի Գ. Մանուսակեան և
Ժիւլիէթ Մ. Ֆրէնկեան՝ ընկերակցու-
թեամբ Տիարք Տ. Էմիլիոնի և Ա.
Մանուսակեանի :

Պարահանգէսը սկսաւ պիշերուան
ժամը 10ին՝ ազգային Արաքսի սրա-
հին մէջ, գ.ր. պատ. խորհուրդ չե-
ղորէն զարդարած էր թանկակին գոր-
գերով ու ճոխ զարդերով : Ժամ մը
յետոյ պարտարած հասան Գանթա-
թանցա նահանգին կուսակալն, Տ.
Վառձապ, Տիկնայք Օրիորդ Վառձապ
ընկերակցութեամբ քաղաքապետ Տէր
և Տիկնայք Ճորճեքուի Պատ. Թագ.
խորհուրդը մեծ ընդունելութիւն մը
ըրաւ սոյն թանկակին կոչնական-
ներուն : որոնք հազիւ ժամ մը կե-
ցած իրենց հովանաւորած նոյն երե-
կոյցեան մի ուրիշ պարահանգէսին,
կուսային շուքն աւելցնել հայկական
պարահանգէսին, որ արդարեւ կազ-
մուած քաղաքիս ամէն ազգի բարձր
գասուն ներկայացուցիչներով, եզա-
կան ու պսակ պարահանգէսը եղած
էր ամբողջ Քոնստանյայի մէջ :

Օր. Վառձապ և օր. Ս. մեծ հաճոյ-
քով յանձն առին ծաղկեփունջերու
վաճառումը, մեծակի շահ մը ար-
տաբերելով : Պատ. խորհուրդը ի պա-
տիւ անոնց ծաղկեփունջեր նորի-
րեց տիկին և օր. Վառձապի ու տի-
կին քաղաքապետին : Ծաղկեփուն-
ջեր նաեւ՝ տիկին Մանուսակեանի ու
տիկին Ֆրէնկեանի, որոնց ազգա-

սիրաբար աշխատութեան կը պարտէր
սոյն պարահանգէսին փայլն ու շուքը :
Մասնաւոր շնորհակալութեան ար-
ժանի է նաեւ այն առատածեղ շափ-
բաններու մեծարանքը, զոր քա-
ղաքիս նշանաւոր հայ վաճառական-
ները մատուցին Տ. Տ. նահանգապե-
տին ու քաղաքապետին : մեծարանք
մը, որ որքան ազգային ազնուու-
թեան պատիւ, նոյնչափ շահաւոր
պարահանգէսի հասոյթին : Ժամը Յին
կուսակալ ու քաղաքապետ մեկնեցան
երբ պարահանգէսը երթալով իր փա-
ռաւորութեան կէտին կը հասնէր :
Պարահանգէսի սոյն փառաբանութե-
նէն, քաղաքիս հայ հասարակութեան
ղէպիլ ազգային յառաջդիմութիւնը
ունեցած անընկճելի աշխատութիւն-
ներէն՝ օտարագրիչները զմայլած՝ բա-
ժակներ առաջարկեցին հայկական
անկախութեան համար, քանի որ
հայ ազգը գիտէր աշխատել իր ուս-
ման տաճարներուն համար : Մորհը-
ղոյ տաննապետ՝ Տ. Ա. Մանուսակեան
բաժակ առաջարկեց Լուսնայի Գա-
րու թագաւորին ու Էլիզաբէթ թա-
գաւորին արեւելատութեան, քանի
որ անոր հայրախնամ հովանաւորու-
թեան կը պարտէր քաղաքիս հայ
գաղութի՝ իր բարգաւաճումն ու
յառաջդիմութիւնը :

Պարահանգէսը իր յարաճուցի ոգե-
ւորութեամբը տեսեց մինչեւ առա-
ւօտ, երբ հանդիսականները յաղա-
մայս պարտաւորեցան մեկնել իրենց
կեանքին մէջ՝ աչազայի հազուադէպ
երջանիկ ժամերու վայելուածով տո-
գորտուած : և ուրիշ ազգային սըն-
տուկը մուտք մը ունեցած էր մեր-
ձաւորաբար (2000) երկու հազար ֆը-
րանքի գումար մը :

Մի քանի շաբաթ տուած, կատար-
ուեցաւ նաեւ քաղաքիս Հայոց Բա-
րեղործական ընկերութեան վարչու-
թեան անդամոց ընտրութիւնը : Քու-
էից տաւելլութեամբ, վարչութեան
անդամ ընտրուեցան

Տ. Տ. Արամ Ապտրեան,
» Գեորգ Գեորգեան,
» Գրիգոր Պէչեքեան,
» Ջաքար Թէրզեան,
» Ղազարէ Կարսիկեան,
» Զանիկ Գանջանեան,
» Զիլվան Ալթունեան,
» Մանուկ Պետրիկեան,
» Միհրան Պետրոսեան :

Վարչութեան սոյն ինը անդամոց
մէջէն Տ. Տ. Ա. Ապտրեան, Ղ. Կա-
րսիկեան և զ. Ալթունեան իրենց
հրաժարականը դրկած են : գանազան
առարկութիւններով : հետեւաբար
նորընտիր վարչութիւնը, առ այժմ՝
կազմուած է վեց անդամներէ, որոնք
օրինաւորապէս կրնան գործի սկսիլ :

Բարեգործական ընկերութեան յա-
ռաջդիմութիւնը, որ որքան իր ամ-
բողջ անդամոց աշխատութեանէն, այլ
առաւելաբար կերպով վարչական
անդամոց ջանքէն կախում ունի,
ըստ այնմ, նորընտիր պատ. վարչու-
թեան կը մնայ ամէն ջանք ի գործ
գնելու օր քան զօր ընկերութեան
նիւթական ու բարոյական մակտը-
ղակի բարձրութեան աշխատիլ :

Առ այժմ, մեր խորհուրդներէն
վերջ երեք և է կանխակալ կարծիք
յայտնել նորընտիր վարչութեան
թեան աշխատութեանց նկատմամբ :
իր գործերը ամենին գրական պատաս-
խանները պիտի ըլլան : Գիտել տանք
միայն թէ նախօր վարչութիւնը
կրցաւ ընկերութիւնը բարձրացնել

այնպիսի, երբ որ եւ է ասեմ հասած չէր: Արաքս սրահի կահուստով, որ զլուսարարար կուգայ դիւրացնել նոր վարչութեան աշխատութիւնները: Ընդհանրապէս կը մնայ սիւսի պայն շահագործել գիտնալ արդիւնաւորապէս, ուրիշ չան ունի թէ բարեգործ: Ընկերութիւնը եւ թէ ազգային անասկը, նախորդ վարչութեան աշխատութեան շնորհիւն է, որ քաղաքիս գանազան ազգաբնակութիւնը այսօր աւելի աւաք ու համակարգի վերաբերում մը ունի հանդիպ քաղաքիս հայութեան, քան որ եւ է ժամանակ. անոր շնորհիւն է որ ընկերութիւնը ընդարձակ պատիւ ունի քաղաքիս հայ հասարակութեան առջեւ. ու վերջապէս այն եռանդուն աշխատութեան շնորհիւն էր որ, անգիւ Կէսէօ խումբը մեկնած՝ բոմբակահան խումբը երկրին ներսէն Ս. Բաքս սրահը կը խնդրեն: Մեր ուրախութիւնը պիտի ըլլար՝ աւելի բարձր տեսնել ընկերութիւնը սոյն շրջանին մէջ՝ քան անցեալը, որոն համարձակ սփռալիս յաջողութիւն ու կարողութիւն կը մարտնչէ նոր վարչութեան:

Յարկ-Իշխան
3/16 փետր 1903
Բոնախոնցա

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Լիւսասոյ, 4 յունուար 1903
(Կիպրոս)

Թէ եւ ուշ բայց առիթը կը ներկայանայ մի քանի տեղեկութիւններ տալ անցեալ յունիսի մէջ տեղս կատարուող համազգային ընտրութեան մը մասին որ իր տեսակին մէջ եղական բան մըն է:

Արդէն երկու տարի առաջ առանց օրինական ընտրութեան է հակառակ ժողովրդեան հասանելիութեան, մի միայն տեղապահաւորները շահքով փոխադրեցան պատրիարքին երկնս տարուան համար հին թաղակներէն հաստատուող ժողովրդեան մէջ մեծ իրարանցում յառաջ բերած ըլլալուն, այս անգամ մի քանիներու կողմէ առաջնորդին շուր տըրուած էր թէ նոր ընտրութիւնը եթէ բառաձայնաբար կան օրինաց չի կատարուի կարելի է դարձեալ տնհաճոյ փէպքերու տեղի արուի, որուն ի պատասխանի նոր ընտրութեան օրինաց սահմանէն դուրս չեղնիլքը խոստացած էր:

Ընտր, մաշովոյ անդամներէն մեկը իր ճանկին մէջ գտնուող ներէն վատեց, որուն եկեղեցւոյ բակը և առաջնորդարանի ճիշդ մէջը նայող պանդոկին պատուհանները գոցել սպառնալը մեծ զէնք մը ըլլալով խնդ ախմարը իր շահ ազդիւնէն գերազանց և հլու գործիք մը եղաւ:

Երկրորդ անգամը թէ եւ գրել կարգալ գիտցող բայց ի լրումն խայտառակութեանց հօր անուն անգամ չգիտցող մը և թաղական

ըլլալու հիւանդութենէն բռնուած ըլլալուն առաջնորդին ինչ ինչ գաղտնի դիտումներով զինքը այդ գործին պատրաստելը հասկնալու միջոցն անգամ կարողութիւն չունեցող մըն էր, որն որ վերջ ի վերջոյ մեծ ջանքերով (իմա խարդախութեամբ) յաջողեցաւ թաղական ընտրութիւնը:

Նրորդ անգամը թէ եւ ամենուն յարգանքը վայելող և անգործ պատուաւոր ընտանիքներէն մէկուն պատկանող անձնաւորութիւն մը, բայց դժբաղդաբար պէտք եղածին չափ ազգային գործոց հիւանդութիւն չունենալուն և թէ իր պաշտօնակցաց պէս անձնական շահերու չի նայելուն, չի կարողացաւ թէ իր պայտօնակցաց և թէ առաջնորդին լարած որոգայթներուն տեղեկ ըլլալ:

Եռապատիկ ընտրութեաց ցանկը առաջնորդը իր ձեռքով պատրաստած և արժանիներէ աւելի անարժաններու մեծամասնութեամբ լեցուցած էր. գալով ժողովրդեան թիկնածաններէն մէկուն համար գաղթական ըլլալով գործին անյաջողութեան համար կիպրոսէն մեկնելուն հաւանականութիւնը. միւսին կիպրոսի մէկ ուրիշ քաղաքը երթալու տարաձայնութիւնը իսկ ուրիշը քիչ օրէն Ամբրիկա երթալու խօսքը լսած ըլլալը պատճառ բռնելով ցանկէն դուրս ձգած էր. այս պատճառները անհիմն զրոցներ ըլլալը արդէն ամէն ոք գիտէր և մի միայն իր բռնած ընթացքին դէմ բողոքող պատուաւոր անձնաւորութիւնները թաղականութենէ հետ պահելու պատրաստակար յերկրուած սուտեր էր:

Բոլորեցութեան օրը գաղթականաց կողմէ ըլլալով քիչ և քիչ խնդրելու համար, սրիկակերտ խումբ մը վարձել տուած և տիրացու վարժարանին և պանդոկ պէս ընդհ. ժողովոյ անդամին տունը լաւ մը կերակրելին վերջ զէնքով հոն գալերին պատուիրել տալը հաստատուած իրողութիւն մըն է. իսկ համաժողովական ընտրութեան օրը երկուստեկան բնիկ տուած էր որոնք եկեղեցւոյ գրան գուրսի կողմը իրենց պաշտօնը կատարեցին միջոցն քուէարկութեան վերջանալը: Կեցցէ Գեորգոս վրդ. անպետ կամ լաւ և սէ փուշ. անպետ Սարգիս: Յիբրաի եթէ տաճկաստան գտնուէր Օրմանահանի արժանի փոխանորդ կարելի էր ըլլալ:

Հ. մեծաստեղծի տան անա. մոթաբար ըսած էր թէ անբիտասարկներ աշխատութիւններ պարտա է որովհետեւ Մենք 62 թիւը ամբողջացուցինք. նոյնպէս և սեթէ այս ուղամ թաղականներս յաջողութեամբ հաւատարմ ղերա

խտի ինչն չափ չունի. իսկ երբ չի կարողանամ պիտի մեկնիմ: Ասկէ 6-7 ամիս առաջ տեղուս կառավարական բարձրաստիճան պաշտօնեայ ազգային մը առաջնորդին բռնած ընթացքէն զըզուելով խնդրագրով մը Երուսաղէմի պատրիարքին դիմած և քննիչ մը զրկուելը առաջարկած էր. այս խնդրագրի անպատասխան մնալէն ստէպուած էր երկրորդ մը ևս զրկել իմացնելով որ եթէ պատրիարքարանը դարձեալ լուռ մնայ պիտի ստիպուի օտար եկեղեցի գկմել այս դիրն ալ անպատասխան մնալուն պապական եկեղեցին դիմած և զաւակներն ալ հոն մկրտել տուած է:

Իսկ մնացեալ հոյութիւնը մաս մը պատշաճաններու, մաս մը մարտնետերու և մաս մը ալ յունաց եկեղեցին կը յաճախեն և պիտի յաճախեն քանի որ այս առաջնորդէ զատ ամէն բանի նըմանող արարածը հոս մնայ:

Այսչափ բաւ կը համարիմ մըրտածելով որ այս տեղեկութիւններէն ամշնալով պիտի բարեհաճի իր բէշեր ժողովել ու առնել քալել. հակառակ պարագային պիտի ստիպուիմ աւելի հիմնաւոր փաստերով զինքը խայտառակել, որուն վերջը ուր երթալը հարկաւ կը մտածէ:

Գաղթական

Նիզոնիս, (Կիպրոս) 12/25 Յունուար

Հոկտ. 5ին տեղուս երկուստարդութեան անխոնջ ջանքով հաստատուեցաւ լսարան. ընթերցաստեղ մը Նիզոնիոյ մէջ, որն որ օր լստօրէ յառաջանալու վըրայ է շնորհիւ սիրոյ և միութեան. բայց հոս ալ կը ջանայ առաջնորդը իր սատանայութիւնով քանդել. թէ եւ առ երես մի քանի կտոր գիրքեր նուիրած է որ իբր բարեկամ երեւի, բայց միւս կողմէն յարգին տակէն ջուր քալեցնել կը ջանայ. որովհետեւ անդամներու մեծամասնութիւնը իր շտիրած անձնաւորութիւններն են. Ընկերութեան հաստատուելէն անմիջապէս վերջ անոր միմիայն երկու ամիս կեանք ունենալիքը տարաձայնեցին, բայց բարեբախտաբար 4 ամսուան կը մտենայ և օր ըստ օրէ յառաջանալու վրայ է:

Յունուար մէկի գիշերը ընթերցաստան սրահը ընտանեկան երկկոյթ մը տրուեցաւ և ոգի հայաստանեայց մեծախօսութիւնը մեծաւ յաջողութեամբ կատարեց Օր. Եհնեսան, որն որ ներկայից ըստ ծախահարութեանց և ծաղկեփունջերու արժանացաւ Համեստ օրիորդին ազգասիրա

բար յանձն առած դերը թշնամեաց կողմէ հարկաւ պիտի խճրծուի. բայց կարեւորութենէ բաւորովին զուրկ է: Տեսարանէն վերջը բանախօսութիւններ արտասանուեցան, նոյնպէս և ազգային երգեր. ի վերջոյ ի նըպատ ընկերութեան փոքրիկ վիճակահանութիւն մը կատարուեցաւ:

Կէս գիշեր էր երբ այս զուարթ հանդէսէն բաժնուեցանք մեզ հետ տանելով լաւ ժամանցի մը յիշատակը:

Գ.

ԿԵՆԵՂ

Երկինք պայծառ է: Օդը ճնշիչ ու խղճուկ: Ամեն ոք կուգէ ինքզինքնետել դաշտ, ծծել ազատ օդ:

Հարուստները ժպտաղէմ փաղիւն կառքի մէջ կը զիմեն աննոգ, աննոց համար չէ օդին ծանրութիւնը, աննոք դահ են:

Անդին ինչ ընէ աղքատ-գործաւորը, որ կը մաշէ իւր կեանքը հարուստին համար, մինչդեռ աղան կը փռուի ծառի մը շուքին տակ:

Գեղազուարթ բնութիւն ու հանգստութիւն հարուստին են, իսկ աղքատին բաժինը բեռ ու տղնութիւն, եւ սակայն ասոնք ալ մարդ են և կը կազմեն մարդկային ցեղի ընտանիքին մեծագոյն մասը:

Ցաւերը կը կուտակուին ու կը կուտակուին, կը լեցնեն աղքատին սիրտը աղի կակիծներով:

Օդը կը շարունակէ աւելի ճնշիչ: Այլ եւս չկրնար աշխատիլ գործաւորն, սիրտը լեցուն է ցաւերով, արաստաքը կը սկսի պոթկալ անոր աչերէն:

Ու երկինք մէջ կը նկատուին գորշացած ամպեր: Ամպերը կը կուտակուին, կը խտանան սևադորշ ու կարմրախայտ. փոթորիկը մօտալուտ է. ամէն մարդ այդ կը գուշակէ. կը տիրէ հարս լուսութիւն մը չորս դին, երթալով կը միմիայն օդը սպառնալից: շուրկ ու խշրտաք մը կը լսուի խուլ շատ խուլ, նա կը սկսի շարժիլ. և փոթորիկը կը փրթի:

Ամպերը կը պոթկան, կը կայծակեն, կ'որոտան լեռները, անտառները և տուները կը սարսուան, կը ճչեն, վտանգը մեծ է, ամէն ոք կուգէ փախիլ և ազատիլ:

Հեռուէն կը լսուի ահագոտոյ մոնչիւն մը՝ որ լեռներն ի վար կիջնէ: Հեղեղը ուռչած, աղտոտ, պատառուն լանջերով կը վազէ յառաջ. մահ, մահ սպառնալով. ամենք կը փնտռեն փախուստի ճամբայ:

Հեղեղը կը խափի ժայռերու գլխէն ի վար՝ ճեղքելով ու խլելով լեռաբերնին ու սրտերին և իւր անջու ձգած գլխատուած գլուխը, ոստոստելով, քրքրալից, լանջերն աւելի ուռուցիկ կը վազէ յառաջ, և այն ինչ որ հանգիպի իւր անջու կը քշէ ու կը քշէ, անուշադիր անոնց ճչրուն, ողբերուն և արտասուքին: Ժայռերը խուլ էին. երմբն ամբարտաւան ժայռեր, Աղքատ-գործաւորին քրտինքը, արտասուքը ձեր ապառաժ սրտերու վրայ ի դուր կը թափուին, ի դուր կը ջանային ուռնեցնել ձեր կողերուն վրայ ծաղիկ մը, ժպիտ մը

գլխից, ամբողջ, ամբարտաան ժայռեր: Կը կարծէի՛ք թէ վերը երկինք, վարը դուք: Իսկ հիմայ, հիմայ աղքատին-ժողովուրդին-օրտին, արեան և արտասուքներու: Ղառն ցաւերու գլուխներէն գոյացած ամպեր կը ծանրանան ձեր վրայ: անոցորմ կայծակը վրիժառութեան կիջնէ ձեր վրայ: և հիմա միայն կը հասկնաք թէ անոնք ալ ձեզի չափ ոյժ ունին: Եւ հեղեղը կործանելով ամէն ամբարակ կը վազէ ու կը վազէ առաջ, ցեխոտ, աղոտ ուռուցիկ լանջերով, կը վազէ հրձակելով սպաննփէց:

Փայտերը, ամբարտակները ջախջախուած են... Օղբ կը խաղաղի. հեղինք կը պայծառանայ. հեռուն, հարկերուն անդունդին վրայ կախուած, գեռ ևս կը տեսնուին ամպի ցնցոտիներ ծուկծուկ եղած, անոնք անցեալը միտակ կը յիշեցնեն:

Լոյսը կը սփռի, Խաւարը կը կորչի անօթափոր, Արեւն կողմէն կը լսուի ուրախութեան ձայներ:

Փայտերը փոխուած են: Հեղեղը հոն լինած է՝ այն բնէ՛ որ պէտք է կեանք տարու և ծաղիկու համար: Եւ հոն պիտի բուսնին ծաղիկներ, ժպտաբեկագոր բունած, ժողովուրդին թափած քրտինքը հիմայ շանցներէ զուր:

Մաղկները գոթ ունին, պիտի ժպտին, պիտի գրկախառնուին, պիտի համբուրուին և իրենց փափկին ու քնքշիկ ծոցին մէջ ժողովուրդին պիտի ձգեն որ զլուխին հանգչեցնեն: Փառք ամպերուն, հեղեղին և կեանք ծաղիկներուն:

ԱՆՈՒՇՍԻԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

Փետրվար 9 հինգշաբթի երեկոյ թատրոնի գտնուելու պահուս, ուր Ե՛յքսբրի «Համլէթ»-ը կը ներկայացուէր, ծամը 10 1/2 ին միջոցները թշնամարար սեփհականութիւնս եղող Վասպուրական սրճարանս կրակի տուին, և զիս մեծամեծ զխառուց ենթակայ ըրին: Ի գիտութիւն իմ բարեկամաց խնդրեմ ձեր մտակայ թուոյն մէջ անկիւն մը շնորհել բարեհաճիք:

Մնամ ձեզ
Բարեացակամ
Տէր Վասպուրական սրճարանի
Աստու Յովսէփեան
Վան Ալիւր գիւղացի
1903 փետրվար 12
Ձիւրիպէ

ԱԶԳՍՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Բարիզի մէջ ի նպաստ հայերու և մակեդոնացիներու կազմուած միթինգին մասնակցեր են շորս հաղարէն աւելի մաքրիկ: Միթինգի նախագահը Տէսթուրնէլ, Բրէսանսէ, Փօրէս և ուրիշներ, կորովի ճառեր արտասանեցին: Փրանսական շատ մը թերթեր տյգ միթինգի նկարագրութիւնը

ըրին: Ազատական ուժերը էնչաքաթաթերթը նշանաւոր ճառերու կտորներուն հետ միասին քանի մը անկախ յօդուածներ գրած է նոյն թիւին մէջ:

«Ինչանպէս» ստորագրող յօդուածագիր մը կը բացատրէ որ Փրանսոս կրնար մէջ մտնալ Հայկական և Մակեդոնական խնդիրները կարգադրելու համար:

Ու Տէլկասէ թէ Փրանսայի և թէ իրեն պատուոյն ու յաղթանակին համար պէտք է որ այդ խնդիրը կորովի կերպով ձեռք առնու:

— Վենետիկի մէջ, գիշեր ժամանակ անձնօթ մարդիկ երեք անգամ ատրճանակ պարպեր են Արփիար Արփիարեանին վրայ և վիրաւորեր են զայն:

Արտասահմանի հայ շրջանակներու մէջ շուկ կայ որ Արփիարը զարնուը Վերակազմեալ Հնչակեաններու վարիչներու կարգադրութեամբ եղած է որովհետեւ Արփիար վերջերս խոտաքած էր առնց գաղտնիքները հրապարակ հանել և առնք տուաւ արճիակախ խմբակ անուան ծէր: Կը լսենք նաև որ կարեւոր հնչակեան մը յայտարարած է թէ «Արփիար հնչակեաններուն գնդակէն պիտի իյնայ»:

Եթէ Հնչակեանները զայն կը պատժեն աղբին և իրենց զլխուն այնչափ փորձանքներ բերելուն համար: Ըսելիք մը չունինք: Բայց եթէ անձնական ատելութեան համար միայն մինչև օրս իրենց պաշտելին կուպանեն, այդ պարզ ոճրագործութիւն մը պիտի ըլլայ սեփական մեղքերը թաղցնելու համար:

— Կը լսենք որ Եւրոպայի Հայ Առանցողութեան այս տարուան համագումարը տեղի պիտի ունենայ Պրիւքսէլի մէջ, ապրիլ 1 ին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մեծ վէզիրը բոլոր դեսպաններուն յայտարարած է որ Սուլթանը մեծ սիրով ընդունեց է Մակեդոնիան բարեկարգելու համար առաջարկուած ծրագիրը և շատ գոհ է որ ծրագիրը մշակող պետութիւնները այդչափ բարեկամօրէն կը վերաբերին գէպի թուրքիան, մանաւանդ որ այդ ուղղութեամբ բարենորոգումներու արգէն քանի մը ամիսներ առաջ ձեռնարկուած է:

Մեր կողմէն ըսինք որ այդ բարենորոգումները իրենց մէջ ըսն մը չեն պարունակէր, ու ինչ որ կը գուշակէինք Լամսօրֆին գալուն օրերը այնպէս ալ եղաւ: Ռուսիա և Աւստրիա բարձրակարգ օյինպազութեան էին եւ

լած, և խիստ կերպով խոցեցին իրենց հաւատացող պուլկարներուն սրտերը:

Սուլթանը ուրախութեան ձեռքերը կը շփէ և մէկ կողմէն ալ շօրք կը լեցնէ Մակեդոնիա:

ՊՈՒԼԿԱՐԻԱ.—ՄԱԿԵՂՈՆԻԱ

Պուլկար թերթերը խտորէն կը յարձակին ռուս և աւստրիական կառավարութիւններուն վրայ կնիղծ բարենորոգումներուն պատճառով: Պուլկար կառավարութեան կառավարիկն այլևս երես դարձել այդ խաբեքներէն և մօտիկն ալ եւրոպական միւս մեծ պետութիւններուն:

— Իսխարարներու դատաւարութիւնը կը շարունակուի կանոնաւոր կերպով, վիաններն է որ կը հարցաքննուին:

— Փրանսական «Թան» թերթը կը հաւորդէ որ Մակեդոնիոյ մէջ եռանդուն կնիւրով ապստամբութեան կը պատրաստուին: Սարաֆօֆը իբր թէ արգէն երեք հազար մարդ հաւաքել է և կը գտնուի Քիւստէնտիլի, Տուպնիցայի և Սամաքովի հարաւային կողմը գտնուող Ռիլա լեռներուն մէջ:

— Պուլկար ընդամադիր կուսակցութիւնները շատ դժգոհ են Տանէֆէն և առհասարակ ներկայ կառավարութիւնէն բարենորոգումներու անյաշող ելքին պատճառով:

ՌՈՒՍԻԱ

Կառավարութիւնը իր պաշտօնական թերթին մէջ յայտարարած է թէ ինչպէս Աւստրիոյ հետ միացած և միւս մեծ պետութիւններու հաւանութեամբ Մակեդոնիոյ բարենորոգումներուն ծրագիրը մշակած են: Եւ թէ ինչպէս ռուսական բոլոր հիւպատոսներուն պատուիրուած է համոզել պալլանեան սլավոններուն լուռ մնան հանդուրժել թրքական լուծին և բռնութեան ու յեղափոխութեան չը պիտեն, զրովհետեւ Ռուսիա բոլորովին տրամադիր չէ նոյն իսկ կաթիլ մը արիւն զոհել ապստամբողներու և Պալքանեան խաղաղութիւնը վերգոյններուն համար:

— Կառավարութիւնը գաղտնի շրջաբերականով մը պատուիրած է ռուս բոլոր խմբագիրներուն որ Ռուսիոյ և Սուլթանի գէտ յարձակողական յօդուածներ չը գրուին, որովհետեւ Սուլթանը և Ռուսիա Ռուսիա բարեկամն են:

Ահա քեզ սլավոններու բայեկամ ռուս կառավարութիւնը:

— Բեթերսպուրկի մէջ նորէն ձերբակալութիւններ տեղի ունեցեր են: արգելուած է Կօրքիի բեկանբէն միւսն ներկայացուցող որովհետեւ ու-

տիկանութիւնը տեղեկութիւններ ստացիր է որ ներկայացման միջոցին հակահաւատարական ցոյց մը տեղի ունենայ եղեր:

— Ներքին գործոց նախարարը քանի մը նշանաւոր գրագետներ իր քով կանչելով պատուիրած է եղեր որ մասուլի երկհարկու ամեակի առթիւ ըլլալիք հաւաքումը տեղի չունենայ և մամուլի ազատութեան խնդիրը չը բարձրացուի, հակահաւատարական բոլոր գրագետները կ'ապստամբին հետո վայրեր:

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Հմայակ Գ. Զէնճիճեանց Վանեցի բարձրակարգ երիտասարդ մը Պանթայի զէպիտի Պուրկազ եկած ու անկէ կիպրոս գացած էր: այժմ ուր ըլլալը յայտնի չէ. ուստի անոր ուր գտնուի գիտցողներ թող փութան իմացնել խմբագրութեանս:

ՅՐԱՆՍԱՅԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՎԻՊԱՍԱՆՆԵՐԷՆ ԼՈՒԻ ՆՈՒԱՌԻ

ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԴՈՎԸ

Գերազանցապէս հետաքրքրալարժ Սառլին մասը լրացու

Երկրորդ հատորը սկսաւ հաստարակուիլ

Ամէն դասակարգի գիւրամաշնիլ ըլլալու համար՝ գիրքը երկու մասով երեւան կեղայ (մէկ հատորի մէջ) և ամբողջութիւնը 52-54 թերթերէ պիտի բաղկանայ:

Իւրաքանչիւր մասին բաժանորդագրին է՝ Վառնայի համար 1,25. ուրիշ քաղաքներու և արտասահմանի՝ 1,50. իսկ ամբողջութեանը բաժանագրին է՝ Վառնայի համար 2,50. և Վառնայէ դուրս 3 Ֆր. ձեռքէ առնողները պիտի վճարեն առաջուան պէս՝ 8 երեսնոց պրակին՝ 5 սանդիմ:

Այն քաղաքները և կամ գիւղերը ուր մէկէ աւելի բաժանորդ ունինք, միայն մէկ հասցէի տէր շարաթ երկու պրակը մէկ ծրարով պիտի զրկուի, իսկ առանձին բաժանորդի պրակները 6 հատը մէկ ծրարով պիտի զրկուի փոթի ծախքը հրատարակչին վրայ է:

Փախադրները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին՝
imprimerie Orientale, Onnik Parseghian Varua

Գրամի փոխարէն նամակաղրով ալ կ'ընդունուի:

ՔՈՒՉՍԿ

Նահապետ Քուչակի տաղերը պարունակող գիրքը որուն կցուած է նաև Ա. Զօպանեանի մէկ ընդարձակ ուսումնասիրութիւնը. կը ծախուի Զարպանէլեան գրատունը Վառնա: Գրին է՝ պարզ թղթէ գիրքին 3 Ֆր. Քուչէ » » 5 »

Կարծէ որ ամէն բանասէր և հագրականութեան սիրահար անձ ունենայ այս գրքէն որ ճշմարտապէս զբաղան գոհար մըն է:

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варна